

## ԱԿԱԴԵՄԻԿՈՒ ԱՐԱՄ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

### (Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Իր զիտական ժառանգությամբ և զիտամանկավարժական հարուստ գործունեությամբ Ա. Ղանձանցանը դարձավ հայ դասական բանագիտության ավանդների շարունակողն ու նորովի զարգացնողը խորհրդային ժամանակաշրջանում: Լինելով Ս. Արեդյանի, Հ. Օրբելու, Կ. Մէլիք-Օհանջանյանի կրտսեր ժամանակակիցն ու հավատարիմ բարեկամը՝ նա 1930–80-ական թվականների ընթացքում զիտակություն և տնօրինեց բանագիտական միտքը Խորհրդային Հայաստա-

նում, ստեղծեց բանագիտական հիմնարար արժեքներ, կազմակերպչական նոր հունի մեջ դրեց բանագիտական միտքը, այն մղեց նոր հորիզոններ:

Ա. Ղանալանյանը ծնվել է 1909 թ. փետրվարի 12-ին Աղստավայում, տարրական կրթությունն ստացել է նախ հայրենի քաղաքում, ապա ուսումնառությունը շարունակել Թիֆլիսի 72-րդ միջնակարգ դպրոցում, որն ավարտում է 1925 թվականին: 1927-ին ընդունվում է Երևանի պետհամալսարանի պատմազրական ֆակուլտետը՝ աշակերտելով ժամանակի անվանի հայագետներ Ս. Աբեղյանին, Հ. Աճառյանին, Գ. Ղափանցյանին, Ա. Տերտերյանին: Չորրորդ կուրսում նա մասնագիտանում է ժողովրդական բանահյուսության մեջ և Ս. Աբեղյանի խոր-



հուրդներով ու ցուցումներով զբաղվում բանագիտական ուսումնասիրություններով: Եվ այստեղ էլ Արեւյանը նրան խորհուրդ է տալիս բանագիտական ուսումնասիրություններ սկսելուց առաջ կազմել հայ բանահյուսության մանրամասն մատենագիտությունը, որը կդառնար զալիք հետազոտությունների փաստագրական հիմքը: 1932 թ. իր համալսարանական դասախոս Յ. Խանզադյանի հանձնարարականով և Կ. Մելիք-Օհանջանյանի օժանդակությամբ Ա. Ղանալանյանն աշխատանքի է ընդունվում Հայաստանի նյութական մշակույթի պատմության ինստիտուտ, որով իսկ սկիզբ է դրվում նրա գիտահետազոտական գործունեությանը: Մկրտում կրտսեր, ապա ավագ գիտաշխատողի պաշտոններով նա աշխատում է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական բաժանմունքի (Արմֆան) տարրեր անուններով կռչվող տարրեր ինստիտուտներում, իսկ 1943 թվականից, երբ կազմակերպվում է Հայաստանի գիտությունների ակադեմիան, նա նշանակվում է Գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժնի վարիչ և շուրջ 16 տարի վարում է այդ պաշտոնը (1943–1959 թթ.)՝ ընթացք և ուղղություն տալով խորհրդահայ բանագիտական մտքի զար-

գացմանը: 1941-ին պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն («Արով-յանը և ժողովրդական բանահյուսությունը»), 1970-ին՝ դոկտորական ատենախոսություն («Հայ ժողովրդական ավանդությունները»): Իր գիտական ծանրակշիռ վաստակի համար Ս. Ղանալանյանը 1965-ին ընտրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, 1977-ին՝ ակադեմիկոս: 1967-ին նրան շնորհվում է զիտության վաստակավոր գործչի պատվանուն:

Ս. Ղանալանյանը երկար ժամանակ ժողովրդական բանահյուսություն է դասավանդել Երևանի պետական համալսարանում, Խ. Արովյանի անվ. մանկավարժական, Հեռակա մանկավարժական ինստիտուտներում՝ ամենուրեք վայելելով ուսանողների և մանկավարժների սերն ու խոր հարգանքքը: Իր գիտակազմակերպական արդյունավետ աշխատանքներին զուգահեռ՝ նա այդ տարիներին դառնում է բանագիտական կադրերի ամենաարդյունավետ պատրաստողը, և անցյալ դարի կեսերի բանագետների սերնդի մեծամասնությունը եղել են Ս. Ղանալանյանի աշակերտներն ու հետնորդները: Նա երկար տարիներ եղել է «Պատմաբանասիրական հանդեսի» զինավոր խմբագրի տեղակալ:

Ս. Ղանալանյանի բանագիտական գործունեությունն ընթացել է չորս հիմնական ուղղություններով. 1. բանահյուսական առանձին ժանրերի համահավաք բնագրերի պատրաստում և հետազոտություն, 2. հայ գրականության և բանահյուսության փոխադարձ կապերի ուսումնասիրություն, 3. հայագիտության և հայ բանագիտության պատմության առանձին դեմքերի ու իրողությունների հետազոտություն, 4. հայ բանահյուսության առանձին երևույթներին ու կերպարներին նվիրված գիտահանրամատչելի նյութերի հրապարակում և ուսումնասիրություն: Ս. Ղանալանյանը շարունակողն ու զարգացնողը եղավ կյանքի նոր պայմաններում հայ բանագիտության դասական ավանդների, որոնց սկզբնավորողներից մեծագույնը իր սիրելի ուսուցչապետ Ս. Արեդյանն էր:

Սշխատանքի անցնելով Հայաստանի նյութական մշակույթի պատմության ինստիտուտում՝ նա պրոֆեսոր Կ. Մելիք-Օհանջանյանի խորհրդով ու դեկանակար ցուցումով ձեռնարկում է բանահյուսական արխիվում պահպող Ե. Լալայանի բանահավաքչական արշավախմբի կողմից 1915–16 թթ. ընթացքում արևմտահայ գաղթականներից գրառած 1000 ժողովրդական հերիաթների սյուժետային համարքարտի կազմումը, որը սկսնակ բանագետի համար սևագործ, բայց խիստ կարևոր աշխատանք էր:

Շարունակելով իր ուսուցչապետների և ավագ խորհրդատունների ցուցումների իրագործումը՝ Ս. Ղանալանյանը հենց նույն, 1930-ական թվականների ընթացքում նախաձեռնում է մի ինքնատիպ բանագիտական աշխատության իրականացումը, որն իր թեմայով համահունչ էր իր ժամանակի զաղափարական ոգուն և կոչվում էր «Հայ շինականի աշխատանքի երգեր» (1937 թ): Սույն աշխատության զաղափարը, անշուշտ, թելադրված էր 1930-ական թվականների սկզբին սկսված «Սասնա ծոեր» հերոսավեպի տարրերակ պատումների համակարգ գիտական հրատարակության փորձով՝ իրականացված Ս. Արեդյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի կողմից: Այս «Հայ շինականի աշխատանքի երգեր» աշխատությունն աչքի էր ընկնում ոչ միայն թեմայի առաջնեկությամբ, այլև իր

տեքստաբանական-բանագիտական կառուցվածքով: Նախ, այսուեղ տեքստաբանորեն ի մի են բերված մինչև 1930-ական թվականները գրառված աշխատանքային երգերը՝ իրենց տարրերակներով՝ ենթարկված բնագրագիտական որոշակի սկզբունքների և համակարգված ըստ աշխատանքի տեսակների: Սա, կարելի է ասել, Ա. Ղանալանյանի առաջին սիրանքն էր հայ բանագիտության բնագավառում, որ տակավին ձեռագիր վիճակում արժանանում է Մելքոնյան մրցանակի (1935 թ.):

Ա. Ղանալանյանի հաջորդ սիրանքն է դատնում հայկական առած-ասացվածքների գիտական համահավաքի ստեղծումը: 1940-ական թվականներին նախաձեռնելով այդ գործի իրականացումը, որն Արեդյանի կողմից բնորոշվեց խիստ կարևոր, բայց «Չատ դժար գործ»: Այն հրատարակվեց 1951 թ. «Հայկական առածանի» խորագրով և ընդգրկում էր հայ ժողովրդական իմաստությունների ասութաբանական ժառանգությունը՝ առածներն ու ասացվածքները: Հայ իրականության մեջ առաջին անգամ էր ի մի բերվում դարերի միջով անցած իմաստուն ասույթների մեծագույն ժառանգությունը՝ ենթարկված գիտատերստաբանական որոշակի սկզբունքների: Դա առած-ասացվածքների մի հարուստ զանազան էր, որ սկզբից ևեթ արժանացավ հասարակական առանձնահատությունը ու շաղրդության: Նախ, այդ ասույթներն աչքի էին ընկնում իրենց խորիմաստությամբ ու բովանդակությամբ, որով խիստ տարրերվում էին բանահյուսական մնացած ժանրերից: Հենց ելնելով այդ առանձնահատկությունից՝ Ա. Ղանալանյանը դրանք դասակարգում է ոչ թե ըստ ձեկի կամ առարկայական հատկանիշների, ինչպես ընդունված էր ընդհանուր բանագիտության մեջ, այլ ըստ դրանց իմաստների կամ բովանդակության. ստացվում էին առած-ասացվածքների իմաստային տարրեր փնջեր, որոնք իրենց հերթին ենթակա էին թեմատիկ-առարկայական բաժանման: Դասակարգման այս նորաբերությունը թեպետ մեթոդաբանորեն միանգամայն արդարացի, բայց իր հետ բերում էր տեքստաբանական որոշակի անհարմարություններ: Հենց միայն այն հանգամանքը, որ միևնույն առածք կամ ասացվածքը հաճախ օժտված էր լինում մի քանի տարրեր իմաստներով, արդեն իսկ խոցելի էր դարձնում ըստ իմաստների դասակարգումը: Այս կարգի թերությունները և մանական գիտահասարակական մեծ հետաքրքրությունը «Առածանու» նկատմամբ ստիպեցին կազմողին և հրատարակչությանը տարիներ անց հանդես գալու նոր ու բարենորոգված բազմատպաքանակ հրատարակությամբ («Առածանի», 1960 թ.): Այս երկրորդ հրատարակությունը համալրված էր բազմաթիվ առած-ասացվածքների նոր գրառումներով և ապա, ամենակարևոր օժտված էր թեմատիկ-առարկայական մի ընդարձակ ուղղույթով, շնորհիվ որի վերացվում էին վերոնշյալ տեքստաբանական անհարմարությունից շատերը և մեծապես դյուրացվում որոնվող առած-ասացվածքի հայտնաբերումը:

«Առածանին» օժտված էր առած-ասացվածքների մասին մի ընդարձակ ու համակողմանի ուսումնասիրությամբ, որով բնագրերին կից համապրությամբ ամբողջացվում էր Հայոց առածանին իբրև գիտական մի անկրկնելի հուշարձան: «Առածանին» մեծ զարկ է տալիս մեզանում բանահյուսական գիտական տեքս-

տարանության զարգացմանը: «Առաջանու» օրինակելի դերի հետևանքով 1950-ական թվականներից ի վեր նոր շարժում է սկսվում հերթափների, հանելուկների, անեծք-օրինանքների, հմայական աղոթքների, պանդխության, մանկական, ուսումնական և զինվորի երգերի համահավաք զիտական բնագրերի կազմման ուղղությամբ:

Ա. Ղանալանյանն ինքն իր հետագա գործունեությամբ ավելի է խորացնում ու խթանում բանահյուսական տեքստաբանության զարգացմանը:

Ա. Ղանալանյանի զիտական երրորդ սիրանքը հայկական ավանդությունների (ավանդական գրույցների) բնագրերի զիտական համահավաքի կազմումն է՝ հարուստ ծանոթագրություններով ու ավանդությունների պատմաբանասիրական քննությամբ: Այն լույս տեսավ 1969-ին՝ «Ավանդապատում» խորագրով: Ավանդությունները բանահյուսական այն ժանրերից էին, որ թե՛ հայ և թե՛ միջազգային բանագիտության մեջ տակավին տեքստաբանական ու տեսական հետազոտության չէին արժանացել: Առաջին հերթին գոյություն ուներ ժանրի չտարբերակում, անհստակություն, երբ բուն ավանդություննը շփոթվում էր վիպական այլ ժանրերի հետ: Ուստի, նախ, անհրաժեշտ էր վերացնել այս տարրներությունը, սահմանել որոշակի սկզբունքներ և դրանց շնորհիվ տեսակավորել ու համակարգել նյութն ամբողջությամբ և այն ենթարկել տեքստաբանական ու տեսական քննության: Դարձալ օգնության է հասնում Ա. Ղանալանյանի ամենակտուկ զենքը՝ քննական միտքն ու համար շանասիրություննը, որի շնորհիվ նա մեկուկեա տասնամյակի ընթացքում հաղթահարում է բոլոր էական դժվարությունները և ստեղծում ավանդությունների զիտական համահավաքը:

Ավանդությունների հիմնական նպատակը համարելով ոչ թե ունկնդիրների գեղարվեստական պահանջմունքների բավարարումը, այլ գլխավորապես նրան «համապատասխան աշխարհագրական, պատմական, կենցաղային, կրոնական և այլ կարգի տեղեկություններ ու զիտելիքներ հաղորդելը», Ղանալանյանը դրանով է բացատրում նաև ավանդությունների ճակատագրորեն անհրաժեշտ կապը որոշակի առարկաների, տեղավայրերի ու անձանց հետ, ինչպես նաև նրան ավանդման պարզ ու պատահական եղանակը, ձեի և կառուցվածքի պարզունակությունն ու անկայունությունը, վիպական կայուն բանաձեռքի ու ընդիանուր տեղիների երկրորդական բնույթը, ժողովրդի մեջ ժանրի անվան բացակայությունը: Բայց ամենաէականը ավանդությունների տեսակների որոշարկումն է, որը Ա. Ղանալանյանը լուծել է փայլուն հաջողությամբ: Նա ավանդություններն ու ավանդական գրույցները բաժանել է երեք հիմնախմբի՝ ստուգաբանական, բացատրական և վարքաբանական ավանդություններ: Առաջին խմբում նա դասում է ժողովրդի մտքին անհասկանալի բառեր ու անուններ ստուգաբանող ավանդությունները, երկրորդի մեջ՝ բնույթան ու հասարակության առարկաների ու երեսույթների ծագումը բացատրող ավանդությունները, իսկ երրորդի մեջ՝ զանազան իրական ու մտացածին անձանց մասին կենսագրական տեղեկություններ հաղորդող ավանդագրույցները: Բացի այդ, Ղանալանյանը բուտ բնույթի տարբերակում է ևս ավանդությունների երեք խումբ՝ բուն ազգային, միջազգային և եկամուտ կամ փոխառյալ, որը հասուկ է բանահյուսական բոլոր տեսակներին

**առհասարակ:** Ղանալանյանն իր այս մտահանգրումները չի թողնում սոսկ տեսական մակարդակի վրա, նա իր տեսական եզրակացությունների հիման վրա էլ կատարում է համահավաք բնագրում ընդգրկված նյութի դասակարգումը, ինչպես նաև ներածական ուսումնասիրությունը: Եթե նա նյութի դասակարգման սկզբունքը դարձնում է ավանդությունների էությունը, ապա ավանդությունների հետազոտության համար հիմնականում՝ դրանց բնույթը, ինչպես նաև դրա տակ համախմբող գործող անձինք, առարկաներն ու երևույթները:

«Ավանդապատումը» ամբողջությամբ վերառած մի կուրու ու միասնական զիտական աշխատություն էր, աղբյուրագիտական բարձրարձեք երկ, որը զայխ էր լրացնելու հայ բանագիտության մեջ վաղուց նկատվող բաց տարածություններից մեկը: Այն շուտով թարգմանվում է ուսուերեն և հեղինակի կողմից որոշ շափով համառոտված՝ 1979-ին հրատարակվում Երևանում:

Կյանքի վերջին տասնամյակում Ա. Ղանալանյանը «Ավանդապատումի» սկզբունքով աշխատում էր հայ ժողովրդական երգիծական մանրապատումների գիտական համահավաքի կազմման վրա («Երգիծապատում»): Նա տպագիր ու ձեռագիր տարբեր աղբյուրներից արդեն քաղել էր երգիծական զրույցների հարյուրակիր նմուշներ: Սակայն վերահս մահվան պատճառով այդ արժեքավոր մտահացումը մնաց անավարտ:

Ա. Ղանալանյանի գիտական հաջորդ մեծ նվաճումը եղավ հայ բանահյուսության և գեղարվեստական գրականության կապի ու փոխառնչությունների խնդրի առաջադրումն ու իրագործումը. այն սկսեց 1930-ական թվականներին և շարունակվեց մինչև իր արգասավոր կյանքի արեամուտը: Յուրատեսակ ձևով արձագանքելով ԽՍՀՄ գրողների համագումարում Մ. Գորկու բանահյուսությանը մեծ արժեք տալու և գնահատելու գրողներին ուղղված արդարացի կոչին՝ Ա. Ղանալանյանն սկսում է գրադարձել նշված խնդրի հետազոտությամբ: Առաջնեկն այդ ուղղությամբ դառնում է 1938-ին տպագրված «Պոռշյանը և ժողովրդական բանահյուսությունը» գրքույթը, որին հաջորդում է 1941-ին հրատարակված «Արովյանը և ժողովրդական բանահյուսությունը» մենագրությունը: Եվ այդպես հեղինակ առ հեղինակ սիստեմատիկ հետազոտության առարկա է դարձնում հատկապես հայ նոր գրականության և ժողովրդական բանահյուսության փոխառնչությունների խնդիրը: Առանձնակի արժեք են ներկայացնում հատկապես մեր երեք մեծ բանաստեղծներին՝ Թումանյանին («Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը», 1964 թ.), Իսահակյանին («Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները», 1955 թ.) և Սայաթ-Նովային («Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդական ակունքները», 1963 թ.) նվիրած հետազոտությունները, որոնց մեջ բացահայտված են ու քննված նրանց ստեղծագործությունները սնուցած ու անմահացրած բանահյուսական ակունքները: Եթե Թումանյանի և Իսահակյանի երկերը վերլուծելիս Ղանալանյանը երեսն է հանում բանահյուսական նյութի օգտագործման երկու հիմնական միտում՝ նյութի բանահյուսական մշակումներ և ժողովրդական բանահյուսության արտահայտչամիջոցների ստեղծագործական կիրառումներ, ապա Սայաթ-Նովայի մոտ նա մեկ զլիավոր ուղղություն է բացահայտում՝ բանահյուսական նյութերի

(հայկական և ընդհանուր արևելյան) ու արտահայտչամիջոցների կիրառումը: Ինչպես նախորդ, այնպես էլ հիշյալ քննությունների ժամանակ, Ղանալանյանը ոչ միայն բավարարվում է հեղինակների մոտ բանահյուսական նյութի ու ատաղձի սոսկ արձանագրումով, այլև այդ նյութի վերամշակման ու օգտագործման բանաստեղծական հնարանքների բացահայտումով ու վերլուծմամբ, որով տվյալ աշխատությունները ձեռք են բերում նաև գրականագիտական արժեք: Իսկ երբ նկատի ենք ունենում, որ այս, ինչպես նաև «Ս. Նալբանդյանը և ժողովրդական բանահյուսությունը» (1959 թ.) աշխատությունների այլ և նմանօրինակ քննություններով Ղանալանյանը նպատակ է հետապնդում լայնարձակ նյութի տեսադաշտի վրա ապացուցել հայ նոր, մասսամբ և նախընթաց գրականության հիմնական ոգու ժողովրդայնությունն ու շեշտված դեմոկրատիզմը, ապա միանգամայն պարզ կդառնա նշված հետազոտությունների գրապատմագիտական արժեքը:

Ղանալանյանի այս ուսումնասիրությունները մասն են կազմում նրա, ցավոք անավարտ, «XIX դարի հայ գրականությունն ու ժողովրդական բանահյուսությունը» ծավալուն մենագրության, ուր ժամանակագրական լայն տեսադաշտի վրա ու պատմական միասնական հայացրով ամբողջական հետազոտման է ենթարկվում հայ նոր գրականության և ժողովրդական բանահյուսության աղերսների խնդրառու հարցը:

Բանագիտության հաջորդ բնագավառը, որտեղ իր ծանրակշիռ ու լրջմիտ տեսակետներն է արտահայտել Ա. Ղանալանյանը՝ բանահյուսական տարբեր ժանրերի, ստեղծագործությունների, երեսույթների վերաբերյալ արտահայտած իր նոր տեսադրություններն են կամ այն նոր տեքստերին և գիտահանրամատչելի խնդիրներին նվիրված հրապարակումներն են, որոնք մեծապես նպաստել են բանահյուսական նյութերի և ստեղծագործությունների նորովի պրոպագանդմանն ու մասսայականացմանը: Դրանցից են 1930-ական թվականների սպարեւուցի Փառիկից և բաշկալեցի Վարդան Վարդանյանից գրառած ու հրատարակած «Սասնա ծոեր» հերոսավեպի երկու նոր տարրերակները (տե՛ս «Սասնա ծոեր», հ. Ա, Երևան, 1936, ԺՀ պատում, էջ 815-930, հ. Բ, մասն երկրորդ, Երևան, 1951, ԻԱ պատում, էջ 617): Մեր հերոսավեպի հազարամիա հորելյանի օրերին նա հրատարակում է երկու նոր ուսումնասիրություն («Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական վեպ», «Սասունցի Դավիթ» պատմիչների կյանքն ու գործունեությունը», 1939 թ.): Նույն այդ տարիներին նա Ս. Աբեղյանի և Գ. Աբովյի հետ մասնակցում է «Սասնա ծոեր» հերոսավեպի («Սասունցի Դավիթ») հյուսվածո-համահավաք բնագրի ստեղծմանը՝ կազմելով «Դավիթ և Խանդութ» հատվածը և «Փորք Մհեր» վիպական ճյուղը:

1950-ին Ա. Ղանալանյանը կազմում և հրատարակում է «Հայ ժողովրդական հեքիաթներ» ծավալուն մեկհատորյակը, որը Խորհրդային Հայաստանում հրատարակված հեքիաթների առաջին ժողովածուն էր և որի առաջարանում առաջին անգամ մեզանում տեսականորեն քննվում էին հայկական հեքիաթների երկու կարևոր տեսակների՝ հրաշապատում և իրապատում հեքիաթների ժանրային ու տիպարանական հատկանիշները:

1938-43 թթ. ընթացքում հրատարակում է մի շարք գիտահանրամատչելի գրքույկներ («Նմուշներ հայկական հակակրոնական ֆոլկլորից», 1938 թ., «Հայ ժողովրդական հերոսապատումները», 1942 թ., «Թշնամու կերպարը հայկական հին բանահյուսության մեջ», 1943 թ., «Հայ քաջորդիները», 1943 թ.): Վերջին երեքը գրվել էին Հայրենական մեծ պատերազմի տարիներին հասուլ նպատակադրությամբ՝ հայրենասիրական զաղափարներով՝ ոգեորելու հայ ժողովրդին և նպաստելու թշնամու բաղձալի պարտությանը:

Հայրենական պատերազմի ավարտից անմիջապես հետո (1945 թ.) Ա. Ղանալանյանը Հայաստանի հեռակա մանկավարժական ինստիտուտի հանձնարարությամբ ձեռնամուխ է լինում հայ բանահյուսության ուսումնական դասընթացի շարադրմանը, որը նախատեսված էր ընդգրկել 11 ուսումնական պրակներում: Իրերի բերումով, սակայն, հրատարակվում է ընդամենը չորս պրակ, որոնցից առաջինը նվիրված էր հայ բանագիտության պատմությանը (պր. 1, 1945 թ.), 2-րդը՝ ժողովրդական երգերին (պր. 8, 1945 թ.), 3-րդը՝ առածներին և ասացվածքներին (պրակ 9, 1946) և 4-րդը՝ սովետահայ բանագիտությանը (պր. 11, 1946 թ.):

Ա. Ղանալանյանի ուսումնական պրակներն ու հայ բանահյուսության առանձին ժանրերին ու խնդիրներին նվիրված հետազոտությունները իրենց ծրագրային համակարգով, գիտամանկավարժական կայուն մեթոդաբանությամբ, հարցերի պարզ, կուռ ու ամբողջական մշակվածությամբ մինչև այժմ էլ մնում են մեր բարձրագույն ուսումնական հաստատությունների բանահյուսական լավագույն դասընթացը:

Ա. Ղանալանյանի գիտահետազոտական գործունեության վերջին բնագավառը լայն առումով՝ հայագիտության պատմությունն է, նեղ մասնագիտական առումով՝ հայ բանագիտության պատմությունն է՝ իր նշանավոր ներկայացուցիչներով ու արդյունքներով: Նրա հետազոտած հայագետներից երկուսը՝ Գ. Սրբանձույանը և Ս. Սրեղյանը, արժանանում են իրենց կյանքի ու գործի ամբողջական ուսումնասիրության, որոնք կարևորագույն ներդրումներ են սրբանձույանցագիտության և արելյանագիտության բնագավառում: Մնացած հայագետների գործունեությանը նա դիմում է մասնագիտորեն հայ բանահյուսության նմուշներ գրառելու, հրատարակելու, արժնորելու կապակցությամբ միայն (Ն. Մար, Հ. Օրբելի, Կոմիտաս, Խ. Արովյան, Ս. Նալբանդյան): Իր այս հայագիտական ու բանագիտական աշխատությունների արդյունքներն ուղղակի կամ վերամշակված ձևով նա հետազայում ամփոփեց իր «Դրվագներ հայ բանագիտության պատմության» հետմահու հրատարակած գրքում (Երևան, 1985 թ.):

<sup>1</sup> Ա. Ղանալանյան Գարեգին Սրբանձույանց. «Հայ նոր գրականության պատմություն», հ. III, Երևան, 1964, էջ 555-588, նույնի Գարեգին Սրբանձույանց, Երկեր, հ. I, Երևան, 1978, էջ 7-26, նույնի Մանուկ Սրեղյանի կյանքն ու գործունեությունը. – , Սովետական գրականություններ, 1955, № 12, էջ 126-140:

Իր շուրջ կեսդարյա գիտահետազոտական և գիտամանկավարժական գործունեության բեղմնավոր արդյունքներով Ա. Ղանալանյանն իրավամբ վաստակել է խորհրդահայ բանագիտության ուսիւնական ուղի համահարթողի նախապատիվը։ Զարգացնելով իր մեծ ուսուցչի Մ. Աբեղյանի բանագիտական դասական ավանդները, նա տասնամյակներ շարունակ մեծ պատասխանատվությամբ ընթացք տվեց խորհրդահայ բանագիտության զարգացմանը և իր գիտական վաստակով, մարդկային բարձր ու առինքնող հասկանիշներով, անաշառ սկզբունքայնությամբ արժանացավ համազգային և միջազգային ճանաչման, գիտական պատկառելի հեղինակության։

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ